

Կ'ես-գիշերուան մօտ էր, աշնան աղօտ լուսին մը տկար լուսով կը լուսաւորէր Կ'ոգովտի լիճը. բերդին հրդեհին մնացորդ բոցը երկրորդ լոյս մը ձգած էր ջուրին վրայ, ուստի մեծ զգուշութեամբ սկսաւ մօտենալ, եւ ամենեւին ձայն չի լսելով՝ երկայն ժամանակ ուշ դնելէ վերջ իջաւ ձիւն, թողուց, որ արածի, եւ ինք զգուշութեամբ պտոյտ ընելով հասաւ բերդին դռան առջեւ. տեսաւ դռներն ինկած, տեսաւ Մամիկոնեանց պալատը կիսակործան եւ հրօ ճարակ, տեսաւ դիականց կիսախանձ կոյտը ընդարձակ եւ ծառագարդ գաւթին մէջ թողեալ, իմացաւ թէ այդ գեղեցիկ բերդը կատարեալ գերեզման էր դարձել, ուստի ելաւ պարիսպներէն դուրս՝ սկսաւ լճին հարաւային կողմը երթալ տեսնելու թէ ի՞նչ կայ, հազիւ թէ քանի մը քայլ առաւ դիակ մ'ալ յօդ պատահեցաւ՝ անցաւ առաջ ուրիշ մը, ուրիշ մ'ել՝ եւ տասը-տասներկուք մը համրեց, լուսնի լոյսը շատ աղօտ էր, որ կարենար ճանչել, ուստի քիչ մ'առաջ որ գնաց, տքալու ձայն մը լսեց, վազեց դէպ այն կողմը: «Ա՛հ, քիչ մը ջուր, ի սեր աստուծոյ, քիչ մը ջուր», – կ'ըսէր հողին վրայ պառկած մէկը: Դարձաւ մտաւ բերդը, վազեց դռնապանաց աշտարակին տակի սենեակը, ուր փոքրիկ աղբիւր մը կար, հոն հողէ հաւսարակ ամաններ կը գտնուէին, առաւ լցուց եւ քիչ մը տուաւ, որ խմէ. մարդը երբ ոգի առաւ, այն ատեն՝

– Որդեակ, դու ո՞վ ես, – հարցուց:

– Թադոսի որդի Տրդատն եմ, – ըսաւ վիրաւորը:

– Դու իշխաններուն հե՞տն էիր, երբ եկանք:

– Մենք կեսօրին այստեղ հասանք: Երբ բերդին մուխն ու բոցը տեսանք, ետ դառնալ եւ փախչել սկսանք, բայց երկու հար իւրէ աւելի ձիաւորաց խումբ մը, որ շրջակայքն ակարելու գնացեր եւ կը դառնար, մեր ճամփան սւրգիլեց, ուստի գատեալ թշնամիներէն յուսահատաբար կը ռուեցանք. ես վիրաւոր ընկայ, չգիտեմ միւսներն ի՞նչ եղան.

– Տէ՛ր աստուած, տէ՛ր աստուած, այս ի՞նչ պատուհաս է մեր վրայ, – կ'ըսէր ծեր զինուորը:

Ելաւ այց ընելու. բոլոր ինկելոց կը շօշափէր՝ ձեռքը սրտերնուն վրայ կը դնէր, թէ կենդանի ոք թերեւս կարենայ գտնել, բայց ամէնքը լաւ մեռած էին, դարձաւ վիրաւորին քով, պատեց վերքը ինչչափ կրցաւ, հեծուց իր ձիուն վրայ եւ շտկուեցաւ մօտակայ վանք մը, որ լեռանց ափափայից վրայ շինուած դժուարաւ գտանելի տեղ լինելուն կը յուսար թէ բարբարոսաց ոտքերը չեն հասած, եւ իրօք